Ardshinbank

Հաշվարկային դրույքի (ՀԴ) սահմանման, հաշվարկման և փոփոխման կարգի մասին		
ՀՀ դրամ արժույթով տրամադրվող վարկերի համար	**ԱՄՆ դոլար արժույթով տրամադրվող վարկերի համար**	**Եվրո արժույթով տրամադրվող վարկերի համար**
Հաշվարկային դրույքի (ՀԴ) հաշվարկման հիմք է հանդիսանում 1 տարի ժամկետայնությամբ ՀՀ պետական (գանձապետական) պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերությունը: ՀՀ պետական (գանձապետական) պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերությունների վերաբերյալ տեղեկատվության աղբյուր կարող են հանդիսանալ ՀՀ ԿԲ պաշտոնական կայքի համապատասխան հրապարակումները (եկամտաբերության կոր)՝ հետևյալ հղմամբ՝ https://www.cba.am/am/SitePages/fmofinancialmarkets.aspx: Սույն կետում նշված ինտերնետային հղման փոփոխումը որևէ ազդեցություն կամ հետևանք չի կարող ունենալ սույն կետով սահմանված տոկոսադրույքի փոփոխման վրա: **Հաշվարկային դրույքի փոփոխման ամսաթվերն են յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ը և օգոստոսի 1-ը:** Փետրվարի 1-ի համար Հաշվարկային դրույքը հաշվարկվում է որպես նախորդ տարվա հուլիսի 1-ից մինչև նախորդ տարվա դեկտեմբեր 31-ը ընկած ժամանակահատվածի համար համապատասխան դրույքների միջին թվաբանականը: Օգոստոսի 1-ի համար Հաշվարկային դրույքը հաշվարկվում է որպես տվյալ տարվա հունվարի 1-ից մինչև տվյալ տարվա հունիսի 30-ը ընկած ժամանակահատվածի համար համապատասխան տոկոսադրույքների միջին թվաբանականը: Ոչ աշխատանքային օրերին միջինի հաշվարկում կրկնվում է նախորդ աշխատանքային օրվա տոկոսադրույքը: Եթե վերոնշյալ ցուցանիշը դառնում է անհասանելի, և անհնարին է դառնում տոկոսադրույքի սահմանումը հաջորդ ժամանակահատվածի համար, ապա տոկոսադրույքը հաջորդ ժամանակահատվածի համար սահմանվում է՝ հիմք ընդունելով Բանկի կողմից սահմանվող երկրորդային ցուցանիշը: Երկրորդային ցուցանիշի հաշվարկման հիմք է հանդիսանում ՀՀ ԿԲ կողմից հրապարակված ֆիզիկական անձանցից մինչև 1 տարի ժամկետով (բացառությամբ ցպահանջ	Հաշվարկային դրույքի (ՀԴ) հաշվարկման հիմք է հանդիսանում ֆիզիկական անձանցից 1 տարուց ավել ժամկետով ԱՄՆ դոլարով ներգրավված ավանդների տոկոսադրույքները: Ֆիզիկական անձանցից 1 տարուց ավել ժամկետով ԱՄՆ դոլարով ավանդների տոկոսադրույքների վերաբերյալ տեղեկատվության աղբյուր կարող են հանդիսանալ ՀՀ ԿԲ պաշտոնական կայքի համապատասխան հրապարակումները՝ հետևյալ հղմամբ՝ https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx: Սույն կետում նշված ինտերնետային հղման փոփոխումը որևէ ազդեցություն կամ հետևանք չի կարող ունենալ սույն կետով սահմանված տոկոսադրույքի փոփոխման վրա: **Հաշվարկային դրույքի փոփոխման ամսաթվերն են յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ը և օգոստոսի 1-ը:** Փետրվարի 1-ի համար Հաշվարկային դրույքը հաշվարկվում է որպես նախորդ տարվա հունիսից մինչև նախորդ տարվա նոյեմբերը ներառյալ ընկած ժամանակահատվածի համար հրապարակված տոկոսադրույքների միջին թվաբանականը: Օգոստոսի 1-ի համար Հաշվարկային դրույքը հաշվարկվում է որպես նախորդ տարվա դեկտեմբերից մինչև տվյալ տարվա մայիսը ներառյալ ընկած ժամանակահատվածի համար հրապարակված տոկոսադրույքների միջին թվաբանականը: Եթե վերոնշյալ ցուցանիշը դառնում է անհասանելի, և անհնարին է դառնում տոկոսադրույքի սահմանումը հաջորդ ժամանակահատվածի համար, ապա տոկոսադրույքը հաջորդ ժամանակահատվածի համար սահմանվում է՝ հիմք ընդունելով Բանկի կողմից սահմանվող երկրորդային ցուցանիշը: Երկրորդային ցուցանիշի հաշվարկման հիմք է հանդիսանում ֆիզիկական անձանցից 366 օր ժամկետով (կամ այդ ժամկետը ներառող) առանց ավելացման կամ նվազեցման իրավունքի ԱՄՆ դոլարով ՀՀ առևտրային բանկերի կողմից ներգրավվող ստանդարտ ավանդների տոկոսադրույքները: **Երկրորդային ցուցանիշի փոփոխման ամսաթվերն են յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ը և օգոստոսի 1-ը:** Փետրվարի 1-ի համար երկրորդային ցուցանիշը սահմանվում է որպես առնվազն տվյալ տարվա հունվարի 15-ի դրությամբ (կամ դրանից հետո մինչև տվյալ տարվա հունվարի 31-ը) առևտրային	Հաշվարկային դրույքի (ՀԴ) հաշվարկման հիմք է հանդիսանում ֆիզիկական անձանցից 1-5 տարի ժամկետով Եվրոյով ներգրավված ավանդների միջին տոկոսադրույքները: Ֆիզիկական անձանցից 1-5 տարի ժամկետով Եվրոյով ավանդների տոկոսադրույքների վերաբերյալ տեղեկատվության աղբյուր կարող են հանդիսանալ ՀՀ ԿԲ պաշտոնական կայքի համապատասխան հրապարակումները՝ հետևյալ հղմամբ՝ https://www.cba.am/stat/stat_data_arm/14_Deposit_and_lending_rates_arm.xlsx: Սույն կետում նշված ինտերնետային հղման փոփոխումը որևէ ազդեցություն կամ հետևանք չի կարող ունենալ սույն կետով սահմանված տոկոսադրույքի փոփոխման վրա: **Հաշվարկային դրույքի փոփոխման ամսաթվերն են յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ը և օգոստոսի 1-ը:** Փետրվարի 1-ի համար Հաշվարկային դրույքը հաշվարկվում է որպես նախորդ տարվա հունիսից մինչև նախորդ տարվա նոյեմբերը ներառյալ ընկած ժամանակահատվածի համար հրապարակված տոկոսադրույքների միջին թվաբանականը: Օգոստոսի 1-ի համար Հաշվարկային դրույքը հաշվարկվում է որպես նախորդ տարվա դեկտեմբերից մինչև տվյալ տարվա մայիսը ներառյալ ընկած ժամանակահատվածի համար հրապարակված տոկոսադրույքների միջին թվաբանականը: Եթե վերոնշյալ ցուցանիշը դառնում է անհասանելի, և անհնարին է դառնում տոկոսադրույքի սահմանումը հաջորդ ժամանակահատվածի համար, ապա տոկոսադրույքը հաջորդ ժամանակահատվածի համար սահմանվում է՝ հիմք ընդունելով Բանկի կողմից սահմանվող երկրորդային ցուցանիշը: Երկրորդային ցուցանիշի հաշվարկման հիմք է հանդիսանում ֆիզիկական անձանցից 366 օր ժամկետով (կամ այդ ժամկետը ներառող) առանց ավելացման կամ նվազեցման իրավունքի Եվրոյով ՀՀ առևտրային բանկերի կողմից ներգրավվող ստանդարտ ավանդների տոկոսադրույքները:

Ardshinbank

ավանդների) ներգրավված ՀՀ դրամով ավանդների տոկոսադրույքները: Ֆիզիկական անձանցից մինչև 1 տարի ժամկետով (բացառությամբ ցպահանջ ավանդներ) ներգրավված ՀՀ դրամով ավանդների տոկոսադրույքների վերաբերյալ տեղեկատվության աղբյուր կարող են հանդիսանալ ՀՀ ԿԲ պաշտոնական կայքի համապատասխան հրապարակումները՝ հետևյալ հղմամբ՝ https://www.cba.am/am/SitePages/statmonetaryfinancial.aspx: Սույն կետում նշված ինտերնետային հղման փոփոխումը որևէ ազդեցություն կամ հետևանք չի կարող ունենալ սույն կետով սահմանված տոկոսադրույքի փոփոխման վրա: **Երկրորդային ցուցանիշի փոփոխման ամսաթվերն են յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ը և օգոստոսի 1-ը:** Փետրվարի 1-ի համար երկրորդային ցուցանիշը հաշվարկվում է որպես նախորդ տարվա հունիսից մինչև նախորդ տարվա նոյեմբերը ներառյալ ընկած ժամանակահատվածի համար հրապարակված տոկոսադրույքների միջին թվաբանականը: Օգոստոսի 1-ի համար երկրորդային ցուցանիշը հաշվարկվում է որպես նախորդ տարվա դեկտեմբերից մինչև տվյալ տարվա մայիսը ներառյալ ընկած ժամանակահատվածի համար հրապարակված տոկոսադրույքների միջին թվաբանականը: Հաշվարկային դրույքի հաշվարկված մեծությունը կլորացվում է մինչև 50 բազիսային կետ (0.5%-ային կետ, օրինակ՝ 5.50%, 6.0%, 6.5%, 7.0% ... և այլն): Կլորացումը կատարվում է ինչպես պայմանագրի կնքման պահին, այնպես էլ վարկի գործողության ընթացքում տոկոսադրույքի բարձրացման կամ նվազեցման դեպքում:	բանկերի կողմից հրապարակված համապատասխան տոկոսադրույքների միջին մեծությունը: Օգոստոսի 1-ի համար երկրորդային ցուցանիշը սահմանվում է որպես առնվազն տվյալ տարվա հուլիսի 15-ի դրությամբ (կամ դրանից հետո մինչև տվյալ տարվա հուլիսի 31-ը) առևտրային բանկերի կողմից հրապարակված համապատասխան տոկոսադրույքների միջին մեծությունը: Հաշվարկային դրույքի հաշվարկված մեծությունը կլորացվում է մինչև 50 բազիսային կետ (0.5%-ային կետ, օրինակ՝ 5.50%, 6.0%, 6.5%, 7.0% ... և այլն): Կլորացումը կատարվում է ինչպես պայմանագրի կնքման պահին, այնպես էլ վարկի գործողության ընթացքում տոկոսադրույքի բարձրացման կամ նվազեցման դեպքում:	**Երկրորդային ցուցանիշի փոփոխման ամսաթվերն են յուրաքանչյուր տարվա փետրվարի 1-ը և օգոստոսի 1-ը:** Փետրվարի 1-ի համար երկրորդային ցուցանիշը սահմանվում է որպես առնվազն տվյալ տարվա հունվարի 15-ի դրությամբ (կամ դրանից հետո մինչև տվյալ տարվա հունվարի 31-ը) առևտրային բանկերի կողմից հրապարակված համապատասխան տոկոսադրույքների միջին մեծությունը: Օգոստոսի 1-ի համար երկրորդային ցուցանիշը սահմանվում է որպես առնվազն տվյալ տարվա հուլիսի 15-ի դրությամբ (կամ դրանից հետո մինչև տվյալ տարվա հուլիսի 31-ը) առևտրային բանկերի կողմից հրապարակված համապատասխան տոկոսադրույքների միջին մեծությունը: Հաշվարկային դրույքի հաշվարկված մեծությունը կլորացվում է մինչև 50 բազիսային կետ (0.5%-ային կետ, օրինակ՝ 5.50%, 6.0%, 6.5%, 7.0% ... և այլն): Կլորացումը կատարվում է ինչպես պայմանագրի կնքման պահին, այնպես էլ վարկի գործողության ընթացքում տոկոսադրույքի բարձրացման կամ նվազեցման դեպքում: